ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 18 մարտի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Արթուր Ներսիսյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Արթուր Ներսիսյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2016 թվականի մարտի 2-ին)՝ խնդրելով.

«1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3, 84, 82 և 85, 10 և 60-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 22.12.2010թ. ՀՕ-243-Ն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի «օրացուցային» եզրույթը,

2) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3, 84, 82 և 85, 10 և 60-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 22.12.2010թ. ՀՕ-243-Ն օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժի առկայության դեպքում» դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից տրված բովանդակությամբ հանդերձ,

կամ

3) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3, 84, 82 և 85, 10 և 60, 73, 78, 80-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 22.12.2010թ. ՀՕ-243-Ն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի «օրացուցային» եզրույթը,

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3, 84, 82 և 85, 10 և 60, 73, 78, 80-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 22.12.2010թ. ՀՕ-243-Ն օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժի առկայության դեպքում» դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից տրված բովանդակությամբ հանդերձ,

5) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3, 84, 82 և 85, 10 և 60, 73, 78, 80-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից այն բովանդակությամբ, որով արգելափակում է անձի՝ «իրավունքների նկատմամբ իրավաչափ ակնկալիքի» իրավունքը,

կամ

6) բացահայտել՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 22.12.2010թ. ՀՕ-243-Ն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի «օրացուցային» եզրույթի, 31-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժի առկայության դեպքում» դրույթի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը»:

2. Դիմողը գտնում է, որ դատարանների կողմից կիրառված՝ վիճարկվող դրույթներն իր նկատմամբ առաջացրել են բացասական իրավական հետևանքներ, որի պայմաններում ինքը զրկվել է իր ակնկալած կենսաթոշակի չափից:

Դիմողը նշում է, որ, մինչ սահմանադրաիրավական վեճի առարկա օրենքի ուժի մեջ մտնելը, առկա իրավակարգավորումների համաձայն՝ բարձրլեռնային վայրերում երկարաժամկետ զինծառայություն իրականացրած զինծառայողների կենսաթոշակի իրավունքը հաշվարկվում էր ոչ թե օրացուցային 20 տարի ծառայելուց հետո, այլ՝ Կառավարության որոշումներով հաստատված կարգերով սահմանված հաշվառման կարգով՝ 1500մ եւ ավելի բարձրության վրա 13 տարի և 4 ամիս ծառայելու ընթացքում, իսկ 2500մ եւ ավելի բարձրության վրա՝ 10 տարի ծառայելու ընթացքում:

Դիմողը մատնանշում է, որ դատարանները խնդրո առարկա գործով եկել են այն եզրահանգմանը, որ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքն այդպիսի կենսաթոշակի իրավունք ունեցող անձի մոտ ծագում է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնին դիմելու հիմքով կենսաթոշակ նշանակելու պարագայում՝ կիրառելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչի պարագայում արգելափակվում է «իրավունքների նկատմամբ լեգիտիմ ակնկալիքի» իրավունքը:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) դիմողը բաց է թողել ՀՀ սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված ժամկետը: Այսպես, անհատական դիմումի ներկայացման ժամկետների սահմանումը կարգավորվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասով, ըստ որի՝ դիմողն իրավունք է ստանում դիմելու Սահմանադրական դատարան իր հանդեպ կիրառված դատական ակտի վիճարկման հնարավորություններն սպառելու պահից ոչ ուշ, քան վեց ամիս անց: Դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը վճռաբեկ դատարանի որոշումը փոստային առաքմամբ ստացել է 2015թ. օգոստոսի 29-ին: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 15-րդ հոդվածի 3-րդ

կետի՝ ամիսներով հաշվվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվի վերջին օրը: Այս պարագայում ՀՀ սահմանադրական դատարան դիմելու վերջնաժամկետը համարվում է 2016թ. փետրվարի 29-ը, իսկ դիմողը անհատական դիմումը (էլեկտրոնային եղանակով) ուղարկել է 2016թ. մարտի 1-ին, 1 օր անց, ինչն էլ, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի՝ անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու հիմք է հանդիսանում,

2) դիմողը պնդում է, որ վիճարկվող նորմերն առաջացրել են նշանակվող կենսաթոշակի հաշվարկման սահմանափակումներ: Ըստ դիմողի՝ իր ծառայության անցնելու պահին առկա իրավակարգավորումների պարագայում ինքն ունեցել է ակնկալիքներ, որոնք անիրականալի են դառնում ներկայիս իրավակարգավորման պայմաններում: Արդյունքում՝ արգելափակվում է «իրավունքների նկատմամբ լեգիտիմ ակնկալիքի» իրավունքը: Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ՝ դիմողը եկել է այն եզրահանգման, որ Սահմանադրության իմաստով՝ որոշակի կոնկրետ տեսակի կենսաթոշակի իրավունքի նկատմամբ «լեգիտիմ ակնկալիքը» ծագում է աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելիս կամ աշխատանքի ընթացքում նոր, առավել բարենպաստ իրավակարգավորում ընդունելիս:

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2008 թվականի հունվարի 15-ի թիվ ՍԴՈ-723 որոշման մեջ ընդգծել է այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ լեգիտիմ ակնկալիքի առկայությունը ճանաչվում է միայն այն անձանց նկատմամբ, ովքեր աշխատել և կենսաթոշակի նշանակում են ստացել: Այսինքն՝ կենսաթոշակի հանդեպ լեգիտիմ ակնկալիքը ծագելու համար միայն աշխատելու փաստը բավարար չէ, անձի նկատմամբ պետք է արդեն իսկ նշանակված լինի կենսաթոշակ կամ վերջինս պետք է արդեն իսկ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած լինի, որպեսզի դրա հանդեպ գործի լեգիտիմ ակնկալիքը: Հետևաբար, ՀՀ սահմանադրական դատարանը ճանաչել է ոչ թե որոշակի պայմաններում աշխատած անձանց՝ այդ ընթացքում գործող կարգավորումներով կենսաթոշակ ստանալու լեգիտիմ ակնկալիքը, այլ արդեն իսկ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձանց՝ այդ իրավունքը ձեռք բերելու պահին գործող

իրավակարգավորումներով կենսաթոշակ ստանալու և դրա չափն այլևս չնվազեցնելու լեգիտիմ ակնկալիքը: Կարծում ենք, որ ՀՀ սահմանադրական դատարանի վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում դիմողի ներկայացրած փաստարկներն ակնհայտ անհիմն են,

3) «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերության վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 29-ի ՍԴՈ-1000 որոշումը, որով նշյալ դրույթը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Արթուր Ներսիսյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

18 մարտի 2016 թվականի
ՍԴԿՈ/1-8